ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 05 >> 10 2011թ. N: 337-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՕՅՈՒՆՋՅԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀԱՍՄԻԿ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՄԻԿ ԱՆԴՐԻԱՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ՕՅՈՒՆՋՅԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ-ՎԱՐԺԱՐԱՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)>> կարգի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 46-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու Օյունջյան միջնակարգ դպրոց-վարժարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի նիստի թիվ 6 արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2011 թվականի հոկտեմբերի 10-ից դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու Օյունջյան միջնակարգ դպրոց-վարժարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար Հասմիկ Անդրիասյանի լիազորությունները:
2. Հասմիկ Անդրիասյանին 2011 թվականի հոկտեմբերի 10-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու Օյունջյան միջնակարգ դպրոց-վարժարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում և նրա հետ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Ա.ԳԻՉԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝